*ՍՏԵՓԱՆ ՀԱՍԱՆ-ՋԱԼԱԼՅԱՆ*

# ԱՐՑԱԽ-ԽԱՉԵՆԻ ԻՇԽԱՆԱՑ ԻՇԽԱՆ ՀԱՍԱՆ-ՋԱԼԱԼ-ԴՈԼԱՆ

XIII դարը Խաչենի, ինչպես նաև ամբողջ Հայաստան աշխարհի պատմության ամենադրամատիկ շրջաններից մեկն էր: Դարասկզբի տնտեսական ու մշակութային բուռն վերելքը մասամբ կասեցվեց թաթար-մոնղոլների առաջին արշավանքներով ու Ջալալ Էդ Դինի ասպատակություններով: Ապա կարճատև խաբուսիկ խաղաղությանը հաջորդեց մոնղոլական բանակների ներխուժումը, որն ավարտվեց երկրի համատարած նվաճումով:

Նախամոնղոլական ու հատկապես մոնղոլական տիրապետության հաստատման ժամանակաշրջանում հյուսիս-արևելյան Հայաստանի համար առանձնակիորեն էր կարևորվում՝ Ներքին Խաչենի, ինչպես նաև ողջ Արցախ-Խաչենի տեր, իշխանաց իշխան Հասան-Ջալալ-Դոլայի իշխանապետությունը: Այս մեծ հայրենասեր ու իմաստուն իշխանապետի աթոռակալության առաջին տարիներին Արցախ-Խաչենը ընդհանրապես, Ներքին Խաչենը մասնավորապես տնտեսապես բարձրացավ մի աննախընթաց աստիճանի: Աշխուժացավ մշակութային կյանքը, ստեղծվեցին հոգևոր նոր կենտրոններ և կառուցվեցին այնպիսի ճարտարապետական կոթողներ, որոնք դասական օրինակ պիտի մնային հետագա դարերի համար: Այս ողջամիտ ու հեռատես անհատի դերը մեծ էր նաև ամբողջ Հայաստանի կյանքում: Շնորհիվ նրա վարած արտաքին քաղաքականության երկիրը զերծ մնաց թաթար-մոնղոլների կործանարար արշավանքներից:

Խաչենի Առանշահիկ թագավորական տոհմի ամենաականավոր ներկայացուցիչն էր Հասան-Ջալալ-Դոլան, կենդանության ժամանակ պատմիչների ուշադրության կենտրոնում, եղերական մահից հետո՝ ժողովրդի ու դարձյալ պատմագրական աղբյուրների միահամուռ փառաբանությամբ պսակված: Ժամանակի պատմիչ Կիրակոս Գանձակեցին այսպես է գրում. «Սա մեծամեծ իշխաններ Զաքարեի և Իվանեի քրոջ որդին էր, մի բարեպաշտ, աստվածասեր, հեզ ու հանգիստ, ողորմած ու աղքատասեր, անապատականների նման աղոթքների ու աղաչանքների մեջ ճգնող: Որտեղ էլ լիներ, անխափան կատարում էր ցերեկվա և գիշերվա պաշտամունքը, ինչպես վանականները: Եվ Փրկչի Հարության հիշատակը կիրակի անքուն ու արթուն ոտքի վրա էր անցկացնում: Չափազանց քահանայասեր և ուսումնասեր էր ու աստվածային կտակարանների ընթերցող»[1]: Պատմիչն այնուհետև ավելացնում է. «Աստվածապաշտ, երկյուղած ու պարկեշտ մարդ էր, ազգությամբ հայ»[2]:

Նրա ապրած կյանքի ու կատարած գործերի յուրաքանչյուր մանրամասն արձանագրված է Խաչենի տարածքի և հարևան գավառներում պահպանված վիմագրերում, Գանձասարի վանքին նվիրված նրա ձեռագիր Աստվածաշնչի հայտնի հիշատակարանում և այլուր: Հասան-Ջալալ-Դոլայի մասին է վկայում նաև Սանկտ Պե-

---

[1] **Կիրակոս Գանձակեցի**, Հայոց պատմություն, Երևան, 1982 թ., էջեր՝ 192-193 (այսուհետև՝ Կիրակոս Գանձակեցի):

[2] Նույն տեղում, էջ 257:

տերբուրգի Էրմիտաժի թանգարանում պահվող իր իսկ գործածած սրի այն նեֆրիտե երախակալը, որի վրա նախշանկար քանդակված է. «Հասան-Զալալ իշխան Խաչենոյ»[3]:

Ի՞նչ են նշանակում այս անձնավորության երեք ոչ հայկական անվանումները՝ Հասան, Զալալ, Դոլա:

Այս ժամանակաշրջանում Արցախում և Հայաստանի մյուս մասերում մեծ տարածում գտած ո՛չ հայկական, նույնիսկ ո՛չ քրիստոնեական, օտարոտի անունները, ինչպես Հասան, Վախթանգ, Քուրդ և այլն, զարմանալի չեն լինի, եթե հաշվի առնենք Իրանի, ապա և Արաբական խալիֆայության, նրանց միջոցով էլ՝ օտար մշակութային միջավայրերի մեծ ազդեցությունը: Նաև Արցախում միջնադարում սովորություն է եղել, համաձայն որի, հասարակության մեջ մեծ հռչակ վայելող մարդկանց կոչել են արաբական անուններով, այդ թվում և Զալալ ու Դոլա:

Հնում, ինչպես և այսօր, Արցախում, սովորության համաձայն, ավագ որդուն կոչել են պապի անունով: Տվյալ դեպքում Վախթանգ-Տանգիկը ավագ որդուն՝ Հասան-Զալալ-Դոլային կոչել է իր հոր՝ Հասանի անունով: «Հասան»-ը արաբերեն բառ է, որ նշանակում է «գեղեցիկ տղամարդ»[4]: Արցախ-Խաչենի իշխանաց իշխան Հասանը այսպիսով կրել է մեծարանքի երկու ցուցիչ՝ «Զալալ» և «Դոլա»: «Զալալ»-ը դարձյալ արաբերեն է և նշանակում է «փառք, վեհություն, մեծություն»[5]: «Դոլա»-ն էլ արաբերեն «դավլաթ-դովլաթ» բառից է և նշանակում է «հարստություն, մեծություն, ինչք, պետություն, իշխանություն»[6]:

***Հասան-Զալալ-Դոլայի տոհմի ծագումը:*** Պատմահայր Մովսես Խորենացին գրում է «Առանը, որ «անվանի մարդ էր, առաջինը բոլոր մտավորական և հանճարեղ գործերում», Ն. Ք. II դարում Մեծ Հայքի թագավորության հիմնադիր Վաղարշակի կողմից կուսակալ-նախարար կարգվեց Կուր գետի աջափնյա հայ բնակչության վրա: Խորենացին նշում է նաև, որ Առանը Հայկ նահապետի ժառանգներից սերված Սիսակի որդին էր: Այս Առանի զավակներից էլ առաջ են եկել Գարդմանքի, Ծավդեքի ու Գուգարքի, այսինքն՝ Կուրի և Արաքսի ամբողջ միջագետքի հայ բնակչությունն ու իշխանությունները[7]:

Առանից սկիզբ առած նախարարական տներն էլ պարսկական տիրապետության շրջանում, պարսկերենի ազդեցությամբ կոչվեցին Առանշահիկ, որ նշանակում է «Առանի շահիկ–տիրակալ»: Մարզպանության շրջանում Առանշահիկները ոչ միայն իշխանության տեր էին, այլև V դարի վերջում Վաչագան Բարեպաշտի գլխավորությամբ ստեղծեցին իրենց թագավորությունը՝ սրանից հետո կոչվելով թագավորական տոհմ: Արցախի Առանշահիկները, որոնց տոհմաշղթան ոչ մի ժամանակ և ոչ մի օղակում չընդհատվեց հայրենի հողի վրա, դեռևս արաբական տիրապետության վերջին շրջանում Գանձակի ամիրայությանը զիջեցին նահանգի արևելյան ծայրամասերը, այդ թվում նաև՝ Մուխանք բարեբեր գավառը, և ապավինեցին նահանգի լեռնային ու նախալեռնային գավառներին, որոնք մի ընդհանուր անունով կոչվում էին Խաչեն:

---

[3] **И. А. Орбели**, Нефритовая кинжальная рукоять с армянской надписью, Избранные труды, Ереван, 1963 г., стр. 135-145.

[4] **Հրաչյա Աճառյան**, Հայոց անձնանունների բառարան, հ. Գ, էջ 51:

[5] Նույն տեղում, հ. Դ, էջ 286:

[6] Նույն տեղում, հ. Բ, էջ 76:

[7] **Մովսես Խորենացի**, Հայոց պատմություն, Երևան, 1961 թ., էջ 156:

Այստեղից էլ երկրամասի վարչական անունը դարձավ Խաչենի իշխանություն:

XII դարի վերջին Խաչենի տարածքի վրա արդեն նկատելի է նույն Առանշահիկ տոհմի երեք ճյուղերի առկայությունը, որոնք են՝ Ներքին Խաչեն (Խոխանաբերդն* իր շրջականերով), Վերին Խաչեն կամ Ծար (Վաղուհասից ու Ջերմուկ–Իսթիսուից վերը՝ մինչև Սևանա լճի արևելյան ափերը), Հաթերք (Թարթառ գետի միջին ավազանը և այժմյան Հաթերք գյուղի շրջակայքը):

XIII դարի սկզբին էլ Ներքին Խաչենի իշխան Վախթանգ-Տանգիկի մահից հետո նրան հաջորդում է իր որդի Հասան-Ջալալ-Դոլան:

Այսպիսով, Հասան-Ջալալ-Դոլան սերում է Արցախի Առանշահիկների թագավորական տոհմից:

1214 թ. իշխանության տիրացած Հասան-Ջալալ-Դոլան կարծես կանխազգում էր թաթար-մոնղոլների բերելիք ավերումների հետևանքները և փորձեց ազգային–մշակութային գործի աննախադեպ վերելքով, շինարարական գործունեությամբ, Եկեղեցու շենացումով, հոգևոր մեծ արժեքների ստեղծումով կանխել կորուստները: Եվ 1216 թ. սկսեց Գանձասարի վանքի կառուցումը: Նա իրենց տոհմական գերեզմանատան վրա գտնվող եկեղեցու հիմքերի վրա բարձրացրեց մի նոր տաճարի հիմքերը: Վանքի շինարարությունը տևել է 22 տարի և ավարտվել 1238 թ.[8]:

Շինարարության երկար տևելու պատճառը, ամենայն հավանականությամբ, պետք է համարել թաթար-մոնղոլական պարբերական հարձակումները: Ժամանակի պատմիչները և հատկապես Կիրակոս Գանձակեցին հիացմունքով են նկարագրում վանքի կառուցումը և օծման արարողության մանրամասները: Գանձակեցին պատմում է, որ օծման հանդեսին ներկա էին Աղվանքի Ներսես Կաթողիկոսը՝ բազում եպիսկոպոսների հետ, Վանական վարդապետը՝ ուսուցչապետներով հանդերձ, և տարբեր հոգևոր առաջնորդներ:

Եկեղեցին օրհնում են յոթ հարյուր քահանաներ: Հասան-Ջալալ-Դոլան շքեղ հյուրասիրություն էր կազմակերպել, որի ընթացքում ինքն իսկ անձամբ սպասարկում էր մասնակիցներին, ապա նրանցից յուրաքանչյուրին, ըստ իրենց դիրքի, առատաձեռն նվիրատվություններով ճանապարհեց իրենց տները: Այս հանդիսությունները, ինչպես գրում է Կիրակոս Գանձակեցին, տեղի են ունեցել 1240 թ. հուլիսի 22-ին, կիրակի՝ Վարդավառի տոնին[9]:

Փարիզի Սորբոնի համալսարանի պրոֆեսոր Շ. Դիլը, բնութագրելով հայկական ճարտարապետության կոթողներից համաշխարհային մշակույթի գանձարանը մտած հինգ ամենաուշագրավ երևույթները, երրորդ տեղը հատկացրել է Գանձասարի վանքին՝ Աղթամարի և Հռիփսիմեի վանքերից հետո[10]:

Ա. Լ. Յակոբսոնն էլ, ցույց տալով Գանձասարի վանքի ճարտարապետական բարձր արժանիքները և դրանք գնահատելով համահայկական արվեստի ընդհանուր չափ ու կշռույթով, գրում է, որ այդ կոթողը «հայ ճարտարապետության մարգարիտն է, հայկական միջնադարյան ճարտարապետության ու կոթողային քանդակագործության եզակի հուշարձանը, մի այնպիսի ստեղծագործություն, որն, ամենայն իրա-

---

[8] Գանձասարի վանքի շինարարության մեծ արձանագրությունը (տե՛ս Դիվան հայ վիմագրության, պրակ V, Արցախ, կազմեց Ս. Բարխուդարյանը, էջ 38-39):

[9] **Կիրակոս Գանձակեցի**, էջ 194:

[10] **Թորոս Թորամանյան**, Հայկական ճարտարապետության փոխազդեցության շուրջը, 77777Նյութեր հայկական ճարտարապետության պատմության8888, հ. Բ, Երևան, 1948 թ., էջ 25:

վամբ, պետք է համարել XIII դարի հայ ճարտարապետության հանրագիտարանը[11]: Գանձասարը ոչ միայն ինքնատիպ է ու իր կատարելության մեջ ինքնուրույն, այլև բացառիկ է. մենք չենք կարող ցույց տալ ուրիշ մի այդպիսի հուշարձան Հայաստանի հողի վրա»[12]:

Հասան-Ջալալ-Դոլայի գահակալության առաջին տարիներին հաջորդեցին աշխարհացունց դեպքեր, որոնք այլ ընթացք հաղորդեցին Խաչենի ու ողջ Այսրկովկասի պատմական ընթացքին:

1220 թ. Վոլգայի ստորին ավազանից Այսրկովկաս ներխուժեցին թաթար-մոնղոլական հորդաները: Մոնղոլների առաջին արշավանքները համընկան Վրաց պետության և հայ-վրացական միացյալ զինված ուժերի թուլացման հետ: Թամար թագուհու և հատկապես քաջ զորավար՝ հայ-վրացական միացյալ զինված ուժերի հրամանատար Զաքարեի մահից (1212 թ.) հետո, պետական կառավարումն անցավ թույլ ու անկարող հաջորդների ձեռքը, որոնք չկարողացան պահպանել երկրի ամբողջականությունը: Մի խոսքով, չկար մի ամուր ձեռք, որն ի վիճակի լիներ նախապատրաստել պաշտպանությունը երկրին սպառնացող մեծ աղետի դեմ: Իսկ այդ աղետը չուշացավ: Եվ ահա 1234 թ., երբ հայ ու վրաց զորքերը քաշվել էին իրենց տերերի՝ կենտրոնախույս իշխանների բերդերն ու ամրոցները, մոնղոլ զորապետերը անդիմադրելի հաղթողի իրավունքով շարժվում են դեպի իրենց «վիճակված» նահանգները:

Ժամանակակիցների վկայությամբ՝ ոչ ոք չփորձեց դիմադրել անպատիժ ու անարգել առաջ շարժվող մոնղոլներին: Սրանք նվաճում էին քաղաք քաղաքի ետևից, բերդ բերդի ետևից: Հպատակության առաջին օրինակը տալիս է Իվանե ամիրսպասալարի որդի Ավագը: Ավագին հետևում են մյուս իշխանները՝ Վահրամ Զաքարյանը, Շահնշահը, Էլիկում Օրբելյանը և ուրիշներ:

Ի վերջո, թաթար-մոնղոլները հասնում են Արցախի սահմաններին: Նրանց թվում էր, թե Արցախը ևս կարող են անարգել նվաճել, ինչպես մինչ այդ նվաճել էին Հայաստանի մյուս նահանգները: Սակայն Արցախում նրանց ընդառաջ ելավ մեծ հայրենասեր ու քաջ զորավար, իշխանաց իշխան Հասան-Ջալալ-Դոլան՝ իր հայրենիքին տեր կանգնելու ամուր վճռականությամբ: Այս հեռատես զորավարը իր երկրի բնակիչներին նախապես ամրացրել էր երկու անառիկ բերդերում՝ Հավքախաղացում (Կաչաղակաբերդ) ու Խոխանաբերդում: Հասան-Ջալալ-Դոլան իր զորքով մարտի է բռնվում թաթար-մոնղոլների հետ: Երկարատև ճակատամարտի արդյունքում, սակայն, ուժերի անհավասար պայմաններում, հակառակորդը մեծ դժվարությամբ կարողանում է նվաճել Հավքախաղացը: Երկու կողմերն էլ ունենում են մեծ կորուստներ:

Առաջին ամրոցը նվաճելուց հետո նրանք շարժվում են դեպի երկրորդ ամրոցը՝ Խոխանաբերդը: Այստեղ ևս Հասան-Ջալալ-Դոլան ճակատամարտի մեջ է մտնում նրանց հետ: Երկարատև պայքարից հետո թաթար-մոնղոլները, տեսնելով, որ անհնար է գրավել այս բերդը, դիմում են իշխանաց իշխանին՝ առաջարկելով խաղաղություն: Հասան-Ջալալ-Դոլան մեծ նվերներով իջնում է իր բերդից և հաշտություն կնքում: Մոնղոլները նրան են հանձնում իր երկիրը «հավելվածով»[13]:

Հետագայում Հասան-Ջալալ-Դոլան ճկուն քաղաքականությամբ ու նվերներով

---

[11] **Անատոլի Յակոբսոն**, Գանձասար, Երևան, 1987, էջ 14:

[12] **А. Л. Якобсон**, Из истории армянского средневекового зодчества (Гандзасарский монастырь XIII в.) “Исследования по истории культуры народов Востока”, сборник в честь И. А. Орбели, М. – Л., 1960, стр.151.

[13] **Կիրակոս Գանձակեցի**, էջ 193:

կարողանում է նվաճել զորապետերի սրտերը, և նրանք հանգիստ են թողնում Խաչենի բնակչությանը: Այսքանը տեղի է ունեցել 1238-1239 թթ. կամ 1240 թ. սկզբին: Այս տարիներին է վերաբերվում նաև Հասան-Ջալալ-Դոլայի դուստր Ռուզաքանի ու թաթար-մոնղոլական զորքերի գլխավոր հրամանատար Չարմաղանի որդի Բորա-նուինի* ամուսնությունը, որի շնորհիվ, պետք է ենթադրել, մոնղոլ զորապետերն առավել բարյացակամ դարձան Հասան-Ջալալ-Դոլայի ու Խաչենի նկատմամբ:

1242 թ. սկզբներին Հայաստանում գտնվող զորքերի հրամանատար Չարմաղանը համրանում է: Մոնղոլների թագավորը նրա փոխարեն զորահրամանատար է նշանակում Բաչու-Ղուրչի անունով մեկին: Սա Արևմտյան Հայաստանը սելջուկներից նվաճելու համար հայկական զորագնդերից բանակ է կազմում, որի մեջ ընդգրկում է նաև Հասան-Ջալալ-Դոլային, Ավագ և Շահնշահ Զաքարյաններին: Հենց այս շրջանին էլ վերաբերում է Հասան-Ջալալ-Դոլայի դիվանագիտական այն միջնորդությունը, շնորհիվ որի Հեթում երկրորդի ու մոնղոլների միջև դաշինք կնքվեց և Կիլիկիան զերծ մնաց հարևան երկրներին վիճակված ավերածություններից[14]: Բանն այն է, որ Հեթումը սելջուկների Ղիյաս-Էդդին սուլթանի դաշնակիցն էր և, անշուշտ, պետք է բաժաներ նրա ճակատագիրը: Սակայն շրջահայաց հայ թագավորն իր դաշնակցի պարտությունից անմիջապես հետո դեսպաններ ուղարկեց մոնղոլ զորապետերի մոտ՝ առաջարկելով իր բարեկամությունն ու հպատակությունը: Հանդիպումը Բաչու-նուինի, Չարմաղանի կին Ելթինա խաթունի ու մոնղոլ մյուս մեծամեծների հետ կազմակերպվեց Հասան-Ջալալ-Դոլայի միջոցով: Մոնղոլներն ընդունեցին Հեթումի ընծաները, հաստատեցին բարեկամություն արքայի հետ, տվեցին նաև գիր՝ ըստ իրենց հավատի, որը էլ-տամղա էին կոչում:

Թվում է, թե Հասան-Ջալալ-Դոլայի բարեկամությունը մոնղոլ մեծամեծների հետ, ճկուն քաղաքականությունը և ամենաբարդ իրավիճակներում կողմնորոշվելու փայլուն ընդունակությունը նրա համար պետք է ապահովեին խաղաղ և բարվոք վիճակ օտարների հետ հարաբերություններում: Սակայն այդպես չեղավ: Փոխվեց թաթար-մոնղոլների կենտրոնական իշխանությունը, և մեծ խան ընտրվեց Գույուկը: Սա հարկահաններ նշանակեց Բուղային և Արղունին, որոնք մեկը մյուսից դաժան և նենգավոր էին: Ի՞նչ էր անում նոր կեղեքիչը և ինչպես նա, առաջին իսկ հանդիպումից, ոտքի տակ տվեց այն բարյացակամությունը, որ Հասան-Ջալալ-Դոլան վայելում էր մոնղոլ տիրակալներից:

Գանձակեցին այսպես է նկարագրում նրա գործունեությունը և հատկապես Հասան-Ջալալ-Դոլայի դեմ ունեցած թշնամանքը. «… այս Բուղան, որ եկավ թաթարական զորքերի մոտ, մտնում էր ավագանու տները և իրեն ինչ դուր էր գալիս, անխնա առնում էր, ոչ ոք չէր համարձակվում որևէ բան ասել նրան, որովհետև իր համար սրիկա մարդիկ էր հավաքել պարսիկներից ու արաբներից, որոնք անխնա տմարդի գործեր էին անում և առավել թշնամի էին քրիստոնյաներին: Այդ պատճառով նրան չարացրին Ջալալ կոչված բարեպաշտ իշխան Հասանի դեմ: Նա բռնեց սրան, մեծ պալատում ամբողջ ավագանու առջև բազմաթիվ պատիժների ենթարկեց, քանդեց նրա անառիկ ամրոցները՝ պարսկերեն Խոխանաբերդ կոչվածը, Դեղը, Ծիրանաքարը և նրա ուրիշ ամրոցները: Եվ այնպես խորտակեց դրանք, որ մինչև իսկ հետքերը չէին երևում, որպես թե բնավ չեն եղել: Եվ շատ ոսկի ու արծաթ առավ նրանից, որը հազիվ մահից փրկվեց: Մեծամեծ ավագանին ոչ մի բանով չկարողացավ նրան օգնել.

[14] Նույն տեղում, էջ 204:

այսպես ահաբեկեց բոլոր տեսնողներին»[15]:

Շուտով մահանում է Բուղան, սակայն կենդանի էր Արղունը, որը Բուղայից պակաս նենգավոր չէր և Հասան-Ջալալ-Դոլայի դեմ ուներ հատուկ թշնամանք, որը և պետք է ճակատագրական դեր խաղար իշխանաց իշխանի համար:

Հասան-Ջալալ-Դոլան դիմեց Գույուկ մեծ խանին փոխարինած Բաթու խանի որդի Սարթախի օգնությանը: Քրիստոնյա էր Սարթախը և պատրաստ էր ամեն կերպ օգնել իր հավատակիցներին: Սարթախը սիրով և պատրաստակամությամբ ընդառաջում է Արցախի իշխանաց իշխանին: Եվ 1249 թ. նրան և նրա պատվիրակությանը (Գրիգոր Տղա հեջուբ, իշխան Դեսում, վարդապետ Մարկոս և եպիսկոպոս Գրիգոր) ուղեկցում է իր հոր՝ Բաթու խանի մոտ, որը գտնվում էր Կասպից ծովի ափին՝ Իթլ (այժմյան Աստրախան) քաղաքում: Բաթու խանը մեծ պատվով ընդունում է Հասան-Ջալալ-Դոլային և նրան է վերադարձնում «իր հայրենի Չարաբերդը, Ականաբերդն ու Կարկառը: Խանը նրան է տալիս նաև Աղվանից տեր Ներսես Կաթողիկոսի և նրա ամբողջ գույքի ու ստացվածքի համար ազատության թուղթ, որ ազատ, ոչ հարկատու լինի և ազատ լինի իր իշխանության բոլոր թեմերում ամենուրեք, ու ոչ ոք չընդդիմանա նրա հրամաններին»[16]:

Հասան-Ջալալ-Դոլան հայրենիք է վերադառնում թե չէ, Արղունը վերստին նորոգում է իր սադրանքները, որոնցից խուսափելու համար Հասան-Ջալալ-Դոլան 1256 թ. սկզբին ձեռնարկում է մի ավելի մեծ ու ծանր ճանապարհորդություն դեպի հեռավոր Մոնղոլիա՝ մեծ խանի մոտ, որը նստում էր Կարա-Կորումում: Այս անգամ նրա հետ էին կինը՝ Մամքանը, միակ արու զավակ Աթաբակ–Իվանեն, ինչպես նաև մոնղոլ բարերար Սարթախը: Այս ճանապարհորդությունը տևել է ուղիղ հինգ տարի, մինչև 1261 թ. սկիզբը: Արցախ-Խաչենի իշխանաց իշխանը Մանգու մեծ խանին գանգատվել էր իր վիճակից, բողոքել նրա ոստիկան Արղունի դեմ: Եվ խանը նրան է վերադարձնում ավատապետի տոհմական իրավունքները, մի այնպիսի արտոնություն, որի վրա չպիտի բռնանար ոչ մի պաշտոնյա:

Հասան-Ջալալ-Դոլայի բախտը կարծես պիտի բացվեր, քանի որ Մանգու մեծ խանը նրա հետ գնացած Սարթախին ևս ընդունեց ամենայն սիրով, վախճանված հոր փոխարեն նրան նշանակեց Հյուսիսի ու Կովկասի կուսակալ, պարզապես իր առաջին տեղակալ:

Դժբախտաբար, հետագա դեպքերը դասավորվեցին ի վնաս Խաչենի մեծ իշխանի: Նախ նա կորցրեց իր բարեկամ ու հովանավոր Սարթախին: Վերջինս վերադառնալուն պես վախճանվեց հարազատների տված մահադեղից:

Հասան-Ջալալ-Դոլան վերադարձի ճանապարհին գործի բերումով ուշացավ Թավրիզում: Մամքանին ու Աթաբակին նա ուղարկել էր հայրենիք: Վերադառնալով՝ կնոջը գտավ վախճանված: Այս ամենի մասին Խաչենի մեծ իշխանը պատմում է հոր և մոր պատվերով ընդօրինակված հայտնի Ավետարանի հիշատակարանում, որն ինքն է գրել 1261 թ.՝ վերադառնալուց անմիջապես հետո: Ահա այդ հիշատակարանն ամբողջութամբ.

«Ե[ս Հասան Ջալալ Դաւլոյ ... չոգա] յարևելս առ արքայն Նետողաց և ի կողմն հիւսիւսոյ տոհմիւ աղխաւորն իմով անձամբս վասն խաղաղութեան եկեղեցոյ. ես և ամուսին իմ Մամքան և տեառնատուր մանուկս իմ Աթաբակ չոգաք ընդ արևելս հիւսիւսոյ. և ես ընդ եզր աշխարհի գնացի առ թագաւորն որ Մանգու խանն:

[15] Նույն տեղում, էջ 224:

[16] Նույն տեղում, էջ 258:

Եւ յամեալ զամս հինգ, դարձա ի տուն. նոյնպէս (Մամքան) և Աթաբակն դարձան: Եւ նոքա ժամանեալ ի տեղի իւրեանց, և ես ի Թաւրէժ յամեալ, յորում և աւրհասական մահ ի վերա հասեալ փոխի (Մամքան) ի Քրիստոս: Եւ ես եկեալ գտա զպայծառ տուն իմ լի սգով արտասուաք անմխիթարելի. զի նա էր ամենայն զաւրաց և հեծելոց, նաև եկեղեցոյ և քահանայից սփոփիչ և մխիթարութիւն:

Արդ ի թվին Հայոց ՉԺ (1261) [ետու] զՍուրբ Աւետարանս ծաղկազարդ յիշատակ աստուածասէր տիկնոջն [Մամքանայ] ի մեր Լուսաւորիչ սուրբ աթոռն Աղուանից ի հոգևոր տէրն Ներսէս, որ այժմ բարեհամբաւ լրիւ ունի զաթոռն սուրբն եւ առաւել քան զսուրբս:

Արդ աղաչեմ զձեզ սուրբ հարք եւ ընթերցողք, որք զյիշատակս կարդայք, լի բերանով ասասջիք. Քրիստոս Աստուած, յորժամ գաս ի նորոգել և ի փոխադրել զտիեզերս, նորոգէ և միաւորէ զաստուածասերն [Մամքան] և դասէ ի դասս ընտրելոց Քոց. բարեխաւսութեամբ արարչագործ կամաց Քոց. և աղաչանաւք Սրբոյ Աստուածածնիդ և ամենայն սրբոց Քոց դասէ և պայծառացոյ ընդ սուրբս Քո Ընդ նմին եւ ինձ [զՋալալ Դաւլի] պարգևէ զխաղաղութիւն հոգւոյ և մարմնոյ, և միոյ մանկանս իմոյ Իւանի Աթաբակին պարգևէ զՔո զառատ ողորմութիւնդ և զամենայն թշնամի սոր[ա] ընկրկեալ սատակէ և յամաւթ արա. ամեն ամեն»[17]:

Կարծես անձնական դժբախտությունը քիչ էր, դրան էլ գումարվեցին Արղունի նոր դավերը: 1260 թ. Վրաստանում բռնկվել էին հակամոնղոլական ընդվզումներ, որոնց մասնակից էին Վրաստանի թագավոր Դավիթը, շատ իշխաններ, նրանց հետ էլ հայ Զաքարյանները՝ Զաքարե ամիրսպասալարի որդի Շահնշահի գլխավորությամբ: Արղունը ճնշում է ապստամբությունը և «կալանքի տակ առնում վրաց թագուհի Գոնցային, սրա դուստր Խոշաքին, մեծ իշխան Շահնշահին, Արցախ–Խաչենի իշխանաց իշխան Հասան-Ջալալ-Դոլային և ուրիշ շատերին՝ պարտքերի ու հարկերի պատրվակով»[18]:

Չպետք է կարծել, թե Հասան-Ջալալ-Դոլան մասնակցություն է ունեցել ապստամբությանը և այդ պատճառով է կալանավորվել: Արցախի իշխանաց իշխանը չէր կարող մասնակցել ապստամբությանը հետևյալ պատճառներով.

Նախ, ինչպես վերը նշվեց, ապստամբությունը տեղի է ունեցել 1260 թ., մինչդեռ այս նույն ժամանակահատվածում Հասան-Ջալալ-Դոլան դեռ ճանապարհորդության մեջ է եղել դեպի հեռավոր Մոնղոլիա: Այդ պատճառով էլ նա չէր կարող մասնակցել ընդվզմանը:

Եվ երկրորդ, նույնիսկ եթե ընդունենք, որ 1260 թ. Հասան-Ջալալ-Դոլան ավարտել էր ճանապարհորդությունը և վերադարձել Արցախ, ինչը, սակայն, անհնար է (որովհետև հայտնի է, որ ճանապարհորդությունը տևել էր հինգ տարի. «Եւ յամեալ զամս հինգ, դարձա ի տուն», քանի որ նա գործով ուշացել էր Թավրիզում «և ես ի Թաւրեժ յամեալ» ), միևնույն է, նա չէր կարող մասնակցել ապստամբությանը, որովհետև Մանգու մեծ խանից իրավունք էր ստացել ինքնուրույն կառավարելու իր երկիրը. այդ մասին պատմիչն ասում է. «Խանը նրան թուղթ տվեց, որ նա իր իշխանությանը տիրի ինքնուրույնաբար և ոչ ոքից չերկնչի»[19]: Այս պարագայում բացառվում է մտածել, որ Հասան-Ջալալ-Դոլայի նման հեռատես և ողջամիտ դիվանագետը մասնակցություն կունենար ապստամբությանը:

---

[17] Մատենադարան, ձեռ. N 387, էջ 8բ, 9ա:

[18] **Կիրակոս Գանձակեցի**, էջ 279:

[19] Նույն տեղում, էջ 267:

Արղունը Հասան-Ջալալ-Դոլային կարող էր կալանավորել հետևյալ պատճառով. նվաճված երկրի իշխանը, որ պարտավոր էր ենթարկվել իրեն և եթե որևէ արտոնություն էր պետք՝ խնդրեր իրենից, ահա խանի մոտ իր դեմ գանգատի էր գնացել: Եվ այդ գանգատի շնորհիվ հայ իշխանը ստացել էր այնպիսի արտոնություններ, որոնց առկայությամբ նսեմանում էր Արղունի դերը՝ որպես խանի կուսակալի և գլխավոր հարկահանի: Չէր կարող պատահել, որ հարևան հայ և այլազգի իշխանավորները ևս, Հասան-Ջալալ-Դոլայի օրինակին հետևելով, չբողոքեին կամ չհրաժարվեին ենթարկվել Արղուն հարկահանին: Հենց այս պատճառով կարող էր Արղունը վերոհիշյալ մարդկանց թվում կալանավորել նաև Հասան-Ջալալ-Դոլային:

Ապստամբներից ոմանք ծանր փրկագնով ազատվեցին բռնավորի ձեռքից, իսկ «բարեպաշտ ու առաքինի իշխան Ջալալին անասելի խոշտանգումներով տանջում էր՝ այնքան շատ հարկեր պահանջելով նրանից, որ նա ի վիճակի չէր տալու: Փայտ դրեց նրա պարանոցը և երկաթ՝ ոտքերը: Եվ սա անում էր նրա նկատմամբ ավելի նրա քրիստոնյա լինելու համար, որովհետև բոլոր մահմեդականները նրա թշնամիներն էին, որոնք հորդորում էին Արղունին նրան սպանելու, ասում էին. «Սա ավելի թշնամի է մեր հավատին ու օրենքներին»: Որովհետև Արղունը նույնպես մահմեդական էր, նրան առավ-տարավ Ղազվին*: Իսկ նա գոհությամբ դիմանում էր ամենին, որովհետև շատ լավ ծանոթ էր աստվածային գրքերին, պաս պահող էր, աղոթք անող, ուտելիքների և ըմպելիքների մեջ չափավոր ու ցանկանում էր մարտիրոսական մահվան»[20]:

Հասան-Ջալալ-Դոլայի դուստր Ռուզաքանը, որ Չարմաղանի որդի Բորա-նուինի կինն էր, շտապեց Հուլավուի կին Տողուս խաթունի մոտ, որպեսզի նրա միջնորդությամբ փրկի հորը: Սակայն այս մասին իմացավ Արղունը և գիշերը շտապ դահիճներ ուղարկեց, որոնք էլ հոդակտոր անելով սպանեցին Արցախի իշխանաց իշխան Հասան-Ջալալ-Դոլային: Կիրակոս և Վարդան պատմիչները գրում են Խաչենի իշխանի նահատակությունից հետո կատարված հրաշքի մասին, թե ինչպես Ղազվինում մի պարսիկ Հասան-Ջալալ-Դոլայի մարմնի մասունքների վրա իջած լույս է տեսել և հավատացած նրանց սրբությանը՝ լցրել է ցամաք ջրհորի մեջ ու պահել:

Հասան-Ջալալ-Դոլայի որդին՝ Աթաբակ–Իվանեն, հոր մասունքները տեղափոխեց հայրենիք և թաղեց իրենց տոհմական գերեզմանատանը՝ Գանձասարի վանքի արևմտյան բակում[21]:

Հասան-Ջալալ-Դոլայի նահատակությունը, Կիրակոս Գանձակեցու արժանահավատ վկայությամբ, տեղի է ունեցել 1261 թ.[22]:

***Հասան-Ջալալ-Դոլայի տիտղոսը և տիրապետության սահմանները.*** Տիտղոսի հարցը հանգամանորեն քննված է Հ. Օրբելու աշխատության մեջ[23]: Գիտնականը մեկ առ մեկ հիշում է մատենագրության մեջ և արձանագրություններում Հասան-Ջալալ-Դոլային տրված բոլոր կոչումները և փորձում նրանցով պատկերացում տալ Արցախ-Խաչենի իշխանաց իշխանի իրավունքների և հավակնությունների մասին:

Բազմազան են այն տիտղոսները, որոնցով պատվվել է Արցախ-Խաչենի տերը: Դրանք կարելի է դասակարգել հետևյալ խմբերով.

ա) «Իշխան Խաչենոյ», «տէր Խաչենոյ», «տէր Խոխանաբերդոյ և Խաչենոյ», «Մեծ իշ-

---

[20] **Կիրակոս Գանձակեցի**, էջ 279:

[21] Նույն տեղում, էջ 280:

[22] Նույն տեղում, էջ 280:

[23] **И. А. Орбели**, Сасан-Джалал, князь Хаченский, Избранные труды, стр. 150.

խան»: Սրանք բոլորն էլ հաստատում են, որ Հասան-Ջալալ-Դոլան Խաչենի իշխանն է:

բ) «Ինքնակալ իշխանաց իշխան, տէր Խաչենոյ», «Իշխանաց իշխան արքայաշուք»: Առաջինը՝ Գանձասարի մեծ արձանագրությունից, ինքնաբնորոշում, երկրորդը՝ Վարդան Վարդապետի տվածը[24]: Այս տիտղոսներից պետք է ենթադրել, որ Հասան-Ջալալ-Դոլան գահերեց էր Խաչենի (ինչպես Ներքին Խաչենի, այնպես էլ Վերին Խաչենի–Ծարի ու Հաթերքի) իշխանների մեջ: Սա հաստատվում է, մանավանդ, հաջորդ տիտղոսով, որ է՝

գ) «Մեծ իշխան Խաչենոյ և կողմանցն Արցախոյ»[25]: Այստեղ հաստատապես նկատի է առնվել բուն հին Արցախի տարածքը, և այդ տարածքի վրա իշխողների մեջ՝ Հասան-Ջալալ-Դոլայի գահերեցությունը: Մանավանդ, երբ կա նաև տիտղոսների մի այլ խումբ, որից ուրիշ եզրակացության հանգել անհնար է:

դ) «Մեծ կողմնակալ Աղուանից»[26], «Իշխան Խաչենոյ և Ռանա»[27]:

Հասան-Ջալալ-Դոլան կոչվել է նաև «թագավոր», «արքա»: Որ «թագավոր» տիտղոսը միայն կրողի անձնական հավակնության արդյունքը չէ, դա ապացուցվում է աղբյուրների տվյալներով: Խանչալ–Խաչ կոչված վայրից (1216 թ.) հայտնաբերված արձանագրությունը նրան հիշատակում է «արքա» տիտղոսով: 1229 թ. Ապարանից Խաչեն եկած ոմն Տիրածայր Բերդաձորի Ս. Գրիգոր եկեղեցում քանդակած իր արձանագրության մեջ Հասան-Ջալալ-Դոլային հիշատակում է իբրև «Բարեպաշտ արքային Ջալալին»[28]: Հեջուբի որդի Սմբատը «թագաւոր Ջալալայ Դովլինի հրամանով» նվիրատվություններ է կատարել Մեծառանից Ս. Հակոբա վանքին[29]:

Հասան-Ջալալ-Դոլային արքա կամ թագավոր են կոչում ոչ միայն հայկական աղբյուրները: Ըստ պարսիկ մի անանուն ժամանակագրի տեղեկության՝ «Խաչենը դժվարամատչելի մարզ է, լեռների ու անտառների միջև: Այն Առանի նահանգներից է: Այնտեղ հայեր են բնակվում: Աբխազի (Վիրքի) մարդիկ նրանց փաղիշահին կոչում են թագավոր»[30]:

Հասան-Ջալալ-Դոլային տրված «թագավոր», «արքա», «ինքնակալ թագավոր» տիտղոսների մեջ տարօրինակ ոչինչ չպետք է տեսնել, քանի որ նրա թագավորական տիտղոսի մեջ առկա է Արցախ-Խաչենի Առանշահիկ թագավորական տոհմի ներկայացուցիչների արդար հավակնությունը: Նրանք զտարյուն ժառանգներն էին Առանշահիկ այն տոհմի (այդ մասին հանգամանորեն խոսվեց վերևում), որը երկու անգամ թագավորություն է վերահաստատել բռնակալ տերությունների աքցանի մեջ՝ մեկ Վաչագան Բարեպաշտի ձեռքով, մեկ էլ՝ Համամ Բարեպաշտի: Եվ եթե նրանց օրինական ու հարազատ ժառանգ Հասան-Ջալալ-Դոլան իրեն կոչում է «բնակաւոր ինքնակալ բարձր և մեծ Արցախական աշխարհի, թագաւոր Խաւխանաբերդի, յոքնասահման նահանգաւք»[31], դրա մեջ տարօրինակ ու սխալ ոչինչ չպետք է տեսնել:

---

[24] **Վարդան Վարդապետ**, Հաւաքումն պատմութեան, Վենետիկ, 1862 թ., էջ 152:

[25] **Կիրակոս Գանձակեցի**, էջ 257:

[26] **Սարգիս արքեպիսկոպոս Հասան-Ջալալեանց**, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Բ, Տփխիս, 1858 թ., էջ 174:

[27] **Մակար Բարխուդարյան**, Արցախ, Բագու, 1895 թ., էջ 288-289:

[28] 77777Արարատ8888 հանդես, 1896 թ., էջ 81:

[29] 77777Բանասեր8888, 1901 թ., հ. 3, պրակ Բ և Գ, էջ 135:

[30] **Н. Д. Миклухо-Маклай**, Географические сочинение XIII в. на персидском языке. “Ученые записки Института востоковедения”, т. IX, Л., 1951 г., стр. 204.

[31] Գանձասարի վանքի շինարարության մեծ արձանագրությունը, (տե՛ս Դիվան հայ վիմագրության,

«Ինքնակալ» և «թագավոր» տիտղոսները Հասան-Զալալ-Դոլային բնութագրում են որպես մի իշխողի, որն անկախ էր ժամանակի հայկական միջավայրում:

Այսպիսով պարզեցինք, որ Հասան-Զալալ-Դոլան 1214-1261 թթ. հանդիսացել է ամբողջ Խաչենի, դեռ ավելին՝ հին Արցախի իշխանաց իշխանը կամ իր խոսքով ասած՝ «Բնակաւոր ինքնակալ բարձր և մեծ Արցախական աշխարհի, թագաւոր Խաւխանաբերդի, յոքնասահման նահանգաւք»[32]:

Սրանով էլ ընդհուպ մոտենում ենք Հասան-Զալալ-Դոլայի տիրապետության սահմանները որոշելուն:

Ինչպես տեսանք, աղբյուրները նրան ներկայացնում են որպես ո՛չ միայն ամբողջ Խաչենի, այլև Արցախի, ապա նաև Աղվանքի կամ Առանի իշխանաց իշխանի ու թագավորի: Որոշակի աշխարհագրական վայրերի մասին խոսելիս ևս հաստատվում է այս պարագան: Ահա, օրինակ, այն բերդերը, որոնց թվարկումով Կիրակոս Գանձակեցին Հասան-Զալալ-Դոլայի տիրույթների մի ծայրը հասցնում է Ծար գավառը, մյուսը՝ Հաբանդ: Հասան-Զալալ-Դոլան կարողանում է ետ ստանալ «իր հայրենիքներ Չարաբերդը, Ականան, Կարկառը»[33]: Չարաբերդը նույն Զրաբերդն է Խաչենի կենտրոնում՝ Թարթառ գետի և նրա վտակ Թրղիի միջև[34], Ականան գտնվում էր Վերին Խաչենի տարածքում՝ հին Վայկունիք կամ այս ժամանակների Ծարի արևելյան մասում, ավելի որոշակի Հաթերքի մոտ Բերդավանն է, Կարկառը գտնվում է համանուն գետի վրա և XV դարից սկսած հայտնի է դառնում Շուշի անունով[35]: Այս բերդերի աշխարհագրական տեղաբաշխումը ցույց է տալիս, որ Հասան-Զալալ-Դոլան իշխում էր ողջ Արցախի վրա: Այս երեք բերդերը այն կարևոր հենակետերն էին, որոնց տերը կարող էր իշխել ոչ միայն Արցախի, այլև շրջակա նահանգների վրա, իր խոսքով ասած «…թագաւոր Խաւխանաբերդի, յոքնասահման նահանգաւք»:

---

պրակ V, Արցախ, կազմեց Ս. Բարխուդարյանը, էջ 38-39):

[32] Նույն տեղում, էջ 38-39:

[33] **Կիրակոս Գանձակեցի**, էջ 258:

[34] **Մակար Բարխուդարյան**, Արցախ, էջ 239-240:

[35] **Բակուր Կարապետյան**, Գյուլիստան նամե, Մեծ Կուանք, գիրք I, Երևան, 2005 թ., էջ 102: